


Նման իջեւանատուն մը զեղեցկակերտ մեացեր է տակաւին խօշավանքի Ա. Յովհաննէս եկեղեցւոյ մօտ, Շիրակ գաւառին մէջ, ուսկից գուշակելու է Բագաւանին :

Տիգրան Գ. թագաւորավայել շէնք մը կառուցած է անշուշտ ի յիշատակ եղբօրը, յորում կազմեց զերեզմանը. շինուածք մը որ հեռուէն նմանէր Աղիկառնասի Մաւսուլէոնին. իսկ այսօրուան Բագաւանի գմբէթաւոր տաճարը հեռուէն կը պահէ Տիգրանաշէն մեհեանի ուրուագիծը : Նորոգութիւն մը ի հիմանց(?) եղած է Հերակլ կայսեր արշաւանքներու դարուն (634թ.). այն է, կը համարիմ, որ նախկին գմբէթաւոր մեհեանը, Ա. Հոփիսիմէի տաճարի ոճին վրայ, անվարժ քարագործներ ընդարձակ ծածքը բռնելու համար, ստիպուած՝ դրած են կեղրոնական չորս հաստ կոպտար սիւներ և անոնց վրայ բռներ են տափարակ գմբէթ մը, կարճ միկ թմբուկով մը : Դուրսի պատերուն սեւութիւնը նման է Տեկորի տաճարի պատերու կէսի սեւութեան, ինչ որ ցոյց կու տայ շինութեան շատ հնութիւնը. իսկ ճարտարապետական հնութիւնն ստուգելու համար կը կարօտինք Տեկորի տաճարի նման ուսումնամիտութեան մը. մեր տաղանդաւոր Թ. Թորամանեան ճարտարապետին:

Վաղարշ զէնք շարժելու մէջ քաջ, շենարարութեամբ ալ գուցէ քաջազոյն հան-



Կարաւանատուն շովուակամուրջի մօտ

դիսանար եթէ երկարակեաց մինէր. այսուհանդերձ երկու շատ կարեւոր յիշատակներ թողեր է, որ կարելի է ստուգապէս իրեն համարիւ, մէկը՝ Հովոյի կամուրջ կը միւսը՝ կարաւանատուն նոյն հովուակամուրջին մօտիկ:

Վաղարշի ծնունդը վիպական է, և ինը իսկ թագաւորն ուզեց յիշատակ թողութեանոց իր ձեռակերտ աւանը, զոր կանգ նեց ծնած տեղույն վրայ, հոն՝ ուր Մուլց և Երասխ գետերն իրարու կը խառնուին, և կոչեց Վաղարշաւան, մհծ դաստակերտ, զոր Խորենացի կոչած էր Մարու կէտքը է իրաւունքը Մեր տկար կարծիքով պէտք է իրաւունքը կը կամուրջը կամ այրուբենի գիւտի թուականի մասին այնքան գրուած ու խօսուած է, որ անտարակոյս շատերէն աւելուրդ կամ անօգուտ պիտի դատուի անզամ մասին աւելի կարեւոր խնդիրներուն և շինուած կը բովանդակէ ութ կլոր սիւներունք նորնք նման սրակամար կապուած են իրաւունքը ու հետ:

Հովուակամուրջի կարաւանատունը նախաքիստոնէական ճարտարապետութեան միջներէն մին պէտք է համարել Տեկորի սիւներէն մինչ ամէնը՝ այն եղրակացութեան յանգած են, որ Մաշթոց հայ տառերը ստեղծեր կամ յօրիներ է Քրիստոսի 404 թուականին, այն է՝ մեր Վասմաշապուհ նոյն է՝ Պալատից Յազկերտ Ա. թագաւորին ուրեկորդ տարին, հիմուելով կորեան վկայութեան վրայ՝ Արդ, այս մասին տարւուկ իմ տեսութիւնս յիշեալ բանաւուկ կարծիքն, թոյլ պիտի տրուի ինձի անշուշտ պարզելու հոս համառուիւ իմ տեսութիւնս, որ կը հիմուեի նոյնպէս կորեան վկայութեան վրայ՝ Հետեւարար, ինչպէս ըսի նախորդ յօդուածիս մէջ, երեք կայ հոս պարզելիք.

1) Հայ տառերուն գիւտը արդեօք Վասմաշուհ թագաւորին ճիշդ վեցերորդ տարին կատարուած է.

2) Յազկերտ Ա. ուրեկորդ տարին, որուն մէջ կը զրուի հայ զրերուն գիւտը կամ «Պարութիւնն Հայոց», ինչպէս կ'ըսէ կորիւն, ու Քրիստոսի ո՞ր թուականին կը համապատասխանէ.

ՔԱՆԻ ՄԸ ԽՆԴՐԱԿԱՆ ԿԵՏԵՐ

ԿՈՐԵԱՆ ԳՐՔԻՆ ՄԷՋ

(Շար. տես «Բազմալիկ» 1932, էջ 148)

Յ

Հայ գրերու գիւտին թուականը

3) Մեր գրերու կամ այրուբենի գիւտի թուականի մասին այնքան գրուած ու խօսուած է, որ անտարակոյս շատերէն աւելուրդ կամ անօգուտ պիտի դատուի անզամ մասին աւելի կարեւոր խնդիրներուն և պատմական դէպքերուն ժամանակը կը նշանակէ, «այնուետեւ», «յետ այնորիկ», «յայնմ ժամանակի», «յետ ժամանակի», «յետ ժամանակի» ինչ ընդ մէջ անցելոյ», և ասոնց նման ուրիշ տարտամ և անորոշ բացատրութիւններուն, ուսումնակառակն որոշ թուականիր կու տայ մեզի, մեր Վասմաշապուհ թագաւորին գահակառակեան տարիները, առանց ըսելու սակայն թէ Քրիստոսի ո՞ր տարին գահ բարձրացած է ան, զոր գիւտենի տարին բարձրացած է անորիշ աղբիւրներէն, Արդ, դասի կոչեկեան կոչուած նշանագրերու մասին խօսելով, անոնց Հայաստան բերութեան վեցերորդ ամի թագաւորութեան վասմաշապուհ արքային Հայոց»։ Այդ նշանագրերը, կարծուելով թէ լիովին պիտի զոհացնէին ազգին պէտքերը, անհուն հրճուանք պատճառեցին թագաւորին, Ա. Սահակայ և մանաւանդ Մաշթոց վարդապետին. «ուրախ լինէին», կ'ըսէ պատմէլուն վրայ անմիջապէս Մաշթոց,

1. Կորիւն. էջ 20, 48. - 2. Վասմաշապուհ զահ բարձրացեր է 398 թուականին՝ Վասմանի հրամանով իր խոսրով եղբօր տեղ. որով իրեն հիմքերորդ տարին կ'ըսէ Քրիստոսի 403 թուականը. - 3. Կորիւն. էջ 17,

յանձնաբարութեամբ Ա. Սահակյա և թա-
գաւորին, կը ժողվէ իր շուրջը «մանկունս
մատաղս», և իր բոլոր ջանքերը և եռանդը
ի գործ կը դնէ ուսուցանելու անոնց «զյան-
կարծագիւտ նշանագիլսն», այնպէս որ
արժանի կ'ըլլայ մինչեւ «յաստիճան խսկ
վարդապետութեան գեղեցիկ հասանելոյ»¹:
Բայց ինչ յուսախարութիւն, երբ երկու
տարի անընդհատ և անխոնջ ճիգերէ վերջը,
կը տեսնէ Մաշթոց որ իր բոլոր ջանքերը
զուր և ապարդիւն եղան. «իբրեւ ամս
երկու... նովին նշանագրովը տանէր, կ'ըսէ
կորիւն, իսկ իբրեւ ի վերայ հասեալ՝ թէ
չեն բաւական նշանագիրքն ողջ ածել զսիւ-
ղորայս և զկապս հայերէն լեզուին... դար-
ձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնա-
յին»²: Եւ այսպէս ահա երկու տարի
վերջը, — այն է վոամշապուհ թագաւորին
եօրներորդ տարին (որ է՝ Քրիստոսի 405
թուականին), — կրկին հոգերու և տագ-
նապի կը մատնուին Ա. Սահակ և Մաշ-
թոց հայ զրերու խնդրոյն համար, «և նմին
ելս խնդրէին ժամանակս ինչ»³: Այս բանիս
համար ալ անշուշտ ամիսներ անցան,
մինչեւ որ Մաշթոց ճարահատ՝ բայց ոչ
յուսահատ՝ իր վրայ ստանձնելով այս
անգամ գործին բոլոր ծանրութիւնը և
յաջողութեան հոգը, հետը խումբ մ'ուշիմ
մանուկներ առած կը մեկնի գէպ ի Ասո-
րիք: Մաշթոցին այս երթը կը հանդիպի
բնականաբար Դանիէլեան նշանագրերուն
փորձէն երկու տարի վերջը և քիչ մ'ալ ա-
ւելի ուշ, — որով վոամշապուհ թագաւորին
եօրներորդ տարին անցած: Եւ սակայն,
որ տարին կ'ուզէք որ դնէ կորիւն Մաշ-
թոցին այդ երթը... դարձեալ «ի հինգերորդ
ամի վոամշապիոյ արքային Հայոց, կ'ըսէ,
երթեալ հասանէր (Մաշթոց)ի կողմանս
Արամի, ի քաղաքս երկուս Ասորւոց»⁴:
Հոս ստուգիւ ապշեցուցիչ է կորիւն ժա-
մանակագրութիւնը: Հարկ չկայ ըսել, թէ
Մաշթոց Ասորիք հասնելուն պէս չստեղծեց
հայ տառերը. այլ նախ զնաց այցելեց
Եղեսիա և Ամիդ քաղաքները, տեսակցեցաւ
անոնց եպիսկոպոսներուն հետ. զնաց
գտնելու նաեւ Դանիէլ ասորի եպիսկոպոսը

և խորհրդակցելու հետը հայ նշանազբերում մասին. յետոյ տեսնուեցաւ զանազան գիտնականներու հետ, անցաւ Սամոսատ քաղաքը, իր հետ տարած մանուկները զիտեղեց վարժարաններու մէջ՝ յոյն և ասորի դպրութիւններն ուսանելու. ու յետ երկար ուղեւորութեանց, աղօթքներու, տցնութեանց, Մաշթոցին հանճարեղ միտքը՝ զօրացած աստուածային երկնաւոր լուսով՝ յաջողեցաւ վերջապէս ստեղծել «զնշանագիրս հայերէն լեզուին. և անդ վաղ վաղակի նշանակեալ, անուանեալ և կարգեալ, յօրինէր սիլորայիւք և կապօք»⁶, Սակայն գործը դեռ վերջացած չէր. ան պէտք ունէր յունագէտ ճարտար գործի մը, որուն օգնութեամբ պէտք է գծէր, ձեւէր, կազմէր այդ գրերը, ընտրէր՝ որոշէր անոնց մէջ «զնրբագոյնսն, զկարճն և զերկայնն զառանձինն և զկրկնաւորն»⁶, որպէս զի կատարեալ և իրեն արժանաւոր գործ մը գուրս բերէր: Եւ ասոր համար, խորհրդով և յանձնարարութեամբ Եղեսիոյ և Ամբոսա եպիսկոպոսներուն, կ'երթայ Սամոսատ քաղաքը «հանդերձ օգնականօք իւրովէ»⁶, և այնտեղ կը գտնէ Հոռովանոս նշանաւոր գրիչը, որուն հետ միասին խորհրդակցութեամբ, ծնունդ կու տայ հայ այրուբենին՝ համեմատութեամբ և կարգույոյն ալփաբետին: Մաշթոց Վարդապետ անմիջապէս գործածութեան կը դնէ զայն առ ի փորձ՝ աներեւակայելի յաջողութեամբ, և կը թարգմանէ Սողոմոնի «Ալուսկաց» գիրքը, աջակցութեամբ իր երկու գլխաւոր աշակերտաց, որոնք էին՝ Յովհանն «յԵկեղեց գաւառէն» և Յովհանն «ի Պահանական տանէն»: Եւ հայ դպրութեամբ թարգմանութեան այդ հրաշալի երան, խայրիքը, ըստ վկայութեան կորհան, զոր «զրեցաւ ձեռամբն այնորիկ գրչի» հայ փանոսի, որ ուսոյց միանգամայն մանուկներուն և պատանիներուն նորաց գիւտ հայկական զրչութեան արուեստը՝ Ալեյորդ է բաել, թէ որչափ «ի Պահանական կայութեամբ է բարեկարգ անունը»⁶.

1. $\mathbf{U}^{\text{up}} \mathbf{p} \mathbf{h} \mathbf{u}$, $t \ell 17$, - 2. $\mathbf{U}^{\text{u}} \mathbf{q}$, $t \ell 17-18$, - 3. $\mathbf{U}^{\text{u}} \mathbf{q}$,
4. $\mathbf{U}^{\text{u}} \mathbf{q}$, $t \ell 18$, - 5. $\mathbf{U}^{\text{u}} \mathbf{q}$, $t \ell 19$, - 6. $\mathbf{U}^{\text{u}} \mathbf{q}$, - 7. $\mathbf{U}^{\text{u}} \mathbf{q}$,
 $t \ell 19-20$.

թամանակի կարօտ էին այս բոլոր ուղեւուրութիւնները, խորհրդակցութիւնները, «Առակաց» գրքին թարգմանութիւնը և անոր Գրչութիւնը, մանաւանդ հայ մանուկներուն յոյն և ասորի գպրութիւնները ուսանիլը, և յետոյ նորագիւտ հայ գրչութեան արւեստին կատարելապէս հմտանալը, եւն,, որով որքան ալ մեծ և զարմանալի ըլլար Մաշնոց վարդապետին ճարտար, երագ և անկասելի գործունէութիւնը, անկարելի է որ առ նուազն երկու տարի մնացած ու դեգերած չըլլայ ան Ասորիքի ու Միջազետքի մէջ։ Հետեւաբար, հայ գրերուն փւտը և Մաշնոցի դարձը Հայաստան կարելի չէ դնել աւելի կանուխ քան ին Անդրդդ տարին Վասարապուհ թագաւորին, որ է, Քրիստոսի 407 թուականին, մինչ կորիւն կը նշանակէ զայն «ի վեցերորդ ամի՞ Վասարապհոյ թագաւորին», ինչ որ բացարձակապէս անընդունելի և անըմբը նելի է։

Եւ սակայն, մեր հայ բանասէրներէն
շատերը, համոզուած ըլլալով հանդերձ՝
թէ Կորեան այդ տարեթիւնուն մէջ յայտ-
նի վրիպակ մը կայ, կամ հեղինակին վե-
րագրելի և կամ մանաւանդ գրչագիրներուն,
ինչպէս կ'արտայայտուի նոյնինքն Պրն.
Ջնաբըլեան, թէ Մաշթոց վարդապետին
Ասորիք երթալը «ի հինգերորդ ամի Վռամ-
շապէոյ» դնելուն մէջ «թուանշանի սխալ
մը կայ ակներեւ... և կը սպասուէր յեօր-
ելորդ ամի » ըսել¹, - բայց և այնպէս
ինքը և միւս բանասէրները հաստատուն
կը ման իրենց կարծիքին վրայ, թէ հայ
նշանագրերուն գիւտը տեղի ունեցած ըլլայ
Քրիստոսի 404 թուականին. մինչ իրա-
պէս, կարելի չէ Քրիստոսի 407 տարիէն
առաջ դնել զայն, ինչպէս յայտնի է վերը
ըստածներէս:

Այդ բանասէրները իրենց կարծըթու
կորուան ու նեցուկ ունին, բաց ի կորեհան
վերոյիշեալ վկայութենէն, - ուր Մաշթոց
Վարդապետին դարձը Ասորիքէն կը դրուի
«ի վեցերորդ ամի վռամշապհոյ արբային
չայոց», - նաեւ միւս վկայութիւնը՝ որ
կը գտնուի գրքին վերջը զբուած Սասա-

ԲԱԶՄ. ՅՈՒՆԻՍ-ՅՈՒԼԻՍ 1932

նեան թագաւորներուն ժամանակազրական ցուցակին մէջ, «Պալրութեանն Հայոց յուրեւրոդ ամէ Յազկերտի (Ա.) առեալ սկիզբն»²։ Եւ որովհետեւ կորիւն, նոյն էջին վրայ, վասամ-կրմանի վեց տարի թագաւորութիւն կու տայ, «Թագաւորեալ կրմանայ Պարսից արքայի ամս վեց», այն է՝ 389/390-396, բնականաբար 396ին յաջորդելով անոր Յազկերտ Ա. ասոր ուրեւրոդ տարին կը համապատասխանէ ճշդիւ Քրիստոսի 404 թուականին։ Արդ կը մնայ ըննել թէ Յազկերտ Ա.ի ուրեւրոդ տարին Քրիստոսի ո՞ր թուականին կը համապատասխանէ։

Բ. Առաջին բանը որ աչքի կը զարնէ
կորեան զբաղին վերջը դրուած Պարսիկ
թագաւորներուն ցանկին մէջ, - բաց ի
վուամ Եթի թագաւորութեան 18 տարինե-
րուն անյիշատակութենէն, ինչպէս ըսի
նախորդ յօլուածիս մէջ, - վուամ-կրմանի
թագաւորելուն վեց տարի դնելն է, որ
անտարակոյս սխալ է, բանի որ պատմա-
կան է անոր տասը տարի թագաւորած
ըլլալը, յամս 389-399: Կորեան այդ
վրիպակը ուրիշ կերպով կարելի չէ ար-
դաբացնել, բայց միայն թիւրիմացութեան
արդիւնք համարելով զայն, հետեւանքով
այն պարագային՝ որ վուամ-կրմանի վե-
ցերորդ տարին Յազկերտ Ա. պաշտօնապէս
թագաժառանգ անուանուած է և զրեթէ
գահակից եղած վուամ-կրմանի, և այդ
թուականին երկութին անուններն ալ միա-
սին բանդակուած կ'երեւին դրամներուն
վրայ: Այդ պարագան գուցէ տեղի տուած
է կարծելու՝ թէ 396ին մեռած կամ հրա-
ժարած ըլլայ վուամ-կրման և իրեն տեղ
Յազկերտ Ա. յաջորդած: Մակայն անժըխ-
տելի և պատմական հաւասարի իրողութիւն
մ'է, թէ վուամ-կրման իրապէս տասը
տարի թագաւորած է, և Յազկերտ Ա. գահ
բարձրանալով 399ին, անոր ուրերորդ

1. Կորին. Վարք Մաշքոց (Հրատ. Պ. Ֆնտբեանի).
Էջ 18. Մեկնոպական 285 տողին. — 2. Կորին. Էջ 48.
3. Աւուգեթ. Պատմ. Սասանեան տիրուրեան. Էջ 32.
Վարչապատմ. 1896.

տարին կը համապատասխանէ ճշգիւ Քրիստոսի 407 թուականին, զոյգ մեր Վռամապուհ թագաւորին իններորդ տարւոյն, որուն մէջ կատարուած է անտարակոյս հայ նշանազրելուն զիւտը, ինչպէս ցոյց տուինք վերը։ Այս կերպով միայն կը բացատրուի Կորեան այն վկայութիւնը, «և դպրութեանն Հայոց յուրերորդ ամէ տոեալ սկիզբն»։ Սակայն հոս զիւտելի կէտ մը կայ, որ եթէ հայ տառերուն զիւտը 407ին դնենք, ինչպէս ապա հաշտեցնելու է ասոր հետ Կորեան միւս վկայութիւնը՝ թէ «ի դպրութենէն Հայոց մինչեւ ցվախճան սըրբոյն՝ ամք երեսուն և հինգ», մինչեւ 439 (Մաշթոցի մահուան տարին) Կ'ըլլան «ամք երեսուն և երկուք»։ Անտարակոյս է թէ այս տեղ թուանշանի սիալ մը կայ, որ շատ զիւրաւ բացատրելի է, երբ նկատենք որ այդ թուականները հայ տառերով նշանակուած ըլլալով, զարմանավիչ որ անուշազրութեամբ լի փոխուած ու եղած ըլլայ ձեռագրին մէջ լի։

Դիտակի է դարձեալ, թէ որքան որ կու-
րիւն Վռամ-կրմանի վեց տարի միայն կու-
տայ թագաւորութեան, սակայն անոր բո-
լոր միւս թուականները հիմնուած են բա-
ցարձակապէս Վռամ-կրմանի թագաւո-
րութեան տասը տարիներուն վրայ: Այս
բանիս համոզուելու համար, ենթաղրենց
վայրկան մը թէ Վռամ-կրման վեց տարի
թագաւորած ըլլայ, այս պարագայիս՝ տես-
նենք թէ անոր չորրորդ տարիէն (այն է՝
393 էն, որուն մէջ Մաշթոց կրօնաւորե-
ցաւ) մինչեւ Յազկերտ թի առաջին տա-
րին (որուն մէջ վախճաննեցաւ Մաշթոց)
կ'ընեն իրաւցնէ «ամք բառասուն և հինգ»,
ինչպէս կ'ըսէ կորիւն: Առնենք ուրեմ-
նամ-կրմանի վերջին 2 տարիները, և
ասոնց վրայ աւելցնելով իր յաջորդներուն՝
Յազկերտ Ա.ի 21 տարիները և Վռամ Ե.ի
18 տարիները, մինչեւ Յազկերտ թի առա-
ջին տարին, կ'ունենանք հազիւ 42 տա-
րիներ, և ո՞չ «ամք բառասուն և հինգ»,
ինչպէս կ'ըսէ կորիւն, և այս հաշուով
Մաշթոցի մահը պատահած պէտք է ըլլայ
435 ին, ինչ որ յայտնապէս սիալ է:

Նոյն հաշուով, Յազկերտ Ա. յաջորդելով՝ Վասմանի Քրիստոսի 395 թուականին, անոր ուրեմնորդ տարին կ'ըլլայ 403 թուականը։ Արդ տեսնենք թէ այդ թուականէն մինչեւ Յազկերտ Բի առաջին տարին «յորում վախճանեցաւ երանելին»։ Կ'ընեն ստուգիւ «ամբ երեսուն և հինգ», ինչպէս կ'ըսէ կորիւն, և ըստ հաշուով՝ ո՞ր տարին վախճանած կ'ըլլայ Մաշթոց, Առնենք ուրեմն Յազկերտ Ա. ի թագաւորութեան մացած 13 տարիները, և աւելցնելով վրան վոամ Եի 18 տարինելը և Յազկերտ Բի առաջին տարին, կ'ունենանք երեսուն և երկու տարիներ և ո՞չ «ամբ երեսուն և հինգ», որով Մաշթոցին մահը պատահած կ'ըլլայ 435 թուականին և ո՞չ 439ին, (այն է՝ Վոամ Եի տասնեւհինգերորդ տարին և ո՞չ «յառաջնորմամի Բի Յազկերտի»), ինչ որ կը հակառակի պատմութեան և կորեան վկայութեան։ Հետեւաբար, հարկ է մերժել բացարձակապէս այդ կարծիքը, թէ Վոամ կրման վեց տարի միայն թագաւորացլայ, քանի որ նոյն խոկ կորիւն - հակառակ «ամս վեց» տալու Վոամ կրման թագաւորութեան - իր այդ ժամանակարքական ցանկին թուականները հիմնու հաստատած է Վոամ կրմանի տասնամբ թագաւորած ըլլալուն պատմականութերութեան վրայ, ինչպէս ցոյց պիտայ մեր հետեւեալ հաշիւը։

Եւ իրաւցնէ, Վոամ կրման տասը տարթագաւորած ըլլալով (389-399), անուրուրդ տարին (որուն մէջ կրօնաւորեցաւ Մաշթոց) կը համապատասխանէ Քրիստոս 393 թուականին։ Արդ, անոր գահակալութեան մացած 6 տարիներուն վրա աւելցնելով Յազկերտ Ա.ի 21 տարիներ և Վոամ Եի 18 տարիները, մինչեւ Յազկերտ Բի առաջին տարին (որուն մէջ վախճանեցաւ Մաշթոց), կ'ընեն ճշդիքառատուն և հինգ տարիներ, համաձակ կորեան։ «Եւ արդ անու համար ամս սրբոց հաւատոց ի չորրորդում ամս կրմանայ արքայի մինչեւ ցառաջին արկրորդ Յազկերտի... ամբ քառատուն

կինք»¹, որով և Մաշթոցին մահը պատահած կ'ըլլայ ճշդիւ 439ին սկիզբները:

Բայս այս հաշուբն, Յազկերտ և յաջորդ կելով վլուամ կրմանի 399ին, անոր ուրիորդ տարին (որուն մէջ եղաւ հայ փերուն զիւտը) կ'ըլլայ Քրիստոսի 407 թուականը: Արդ, 21 տարի թագաւորած ըլլալով ան, եթէ անոր մնացած 13 տարիներուն վրայ աւելցնենք իրեն յաջորդող վլուամ Եթի 18 տարիները և Յազկերտ Բի առաջին տարին, կ'ունենանք երեսուն և եղիս տարիներ, և այս հաջորդվ Մաշթոցին մահը կը պատահի ճիշդ Քրիստոսի 439 թուականին, ինչ որ պատմական է:

Այս կերպով կ'ապացուցուի,

1) Անկարելի է որ Կորեան զրչէն ելած ըլլայ այդ «ամս վեց» բացատրութիւնը վլուամ կրմանի թագաւորութեան համար, և հետեւաբար ուղղելի է տպազրին մէջ, «թագաւորեալ կրմանայ Պարսից արքայի ամս տասն»:

2) Ա և Բ Յազկերտներուն թագաւորութեան մէջտեղ հարկ է զնել. «Կ (թագաւորեալ) Վլուամայ հինգերորդի ամս ութուասն», որով կ'ամրողջանայ Պարսիկ թագաւորներուն շարքը կամ ժամանակարկան ցանկը:

3) Վլուամ կրմանի տասը տարի թագաւորելուն հաշուին համաձայն՝ Յազկերտ Ար ուրիշորդ տարին կ'ըլլայ Քրիստոսի 407 թուականը, — որ կը համապատասխանէ մեր Վլուամշապուհ թագաւորին ինեւրորդ տարւոյն, — և իրապէս այդ տարւոյն մէջ պատահած է հայ զրերուն կամ այսրուբենին զիւտը, և ոչ 404ին կամ աւելի ուշ՝ 412-413ին՝ ինչպէս կը կարծի, կ. Տէր-Սահակիան և ուրիշներ, Եղեցիոյ Բարիլաս կամ Բարուլաս եպիսկոպոսին անուան հետ կատելով մեր զրերուն գիւտը:

4. Անցնինք արդ երրորդ խնդրոյն, թէ մեր գրերու զիւտին ժամանակ ով էր Եղեցի կորիմ, Մաշթոց վարդապետին դէպի իսկով եպիսկոպոսը:

կ'ըսէ. «Երթեալ հասանէր ի կողման Արամի՝ ի բազարս երկուս Ասորւոց, որոց առաջինն Եղեսիա կոչի և երկրորդն Ամիզ անուն: Բնդղէմ լինէր սուրբ եպիսկոպոսացն, որոց առաջնոյն՝ Բարիլաս անուն, և երկրորդն՝ Ակակիոս»²: Խորենացին՝ կորինէն առնելով՝ կը զնէ «Բարիլու եպիսկոպոս»³: Յայտնի է թէ սխալ է Բարիլաս կամ Բարիլս զրութիւնը, բանի ու այդ անունով եպիսկոպոս եղած չէ երբեք Եղեսիոյ աթոռին վրայ, որուն համար բանասէրները կ'ուղղեն ու կը կարդան Բարիլաս կամ Բարիլս, որ իրօք Եղարութիւնը Եղեսիոյ ամենէն նշանաւոր եպիսկոպոսն եղած է, բայց հազիւ 412/413 տարւոյն բարձրացած Եղեսիոյ եպիսկոպոսական աթոռին վրայ, յաջորդելով Գիողինեսի (410-412): Ան՝ իրեն հմտութեամբ, սրբութեամբ, ուղղափառ վարդապետութեամբ, և մանաւանդ եկեղեցական պետութեամբ, առաջին տեղը կը բարձրագութեամբ՝ առաջին տեղը կը բարձրական կը կարգի և Միջազգեաբի այն շրջանին բոլոր եպիսկոպոսներուն մէջ, և մենական բոլոր կատարեց՝ յետ Ա. Կիւրդի ծագոյն գերը կատարեց՝ յետ Ա. Կիւրդի Աղեքսանդրացւոյ՝ Եփեսոսի հոչակաւոր ժողովին մէջ, հզօր ախոյեան կանգնելով ուղղափառ վարդապետութեան ընդէմ Նեստորի: Սակայն, եթէ Բարութասի անուան հետ կապենք մեր այրութենի զիւտին պատմութիւնը, չափազանց ուշ պիտի ըլլայ այն, իր 413/414 տարւոյն, ինչպէս կ'ընէ մեր Զամշեանը, որ իր այս կարծիքը պաշտպանելու համար՝ կը սրբազրէ Կորեան խօսքը «ի Զ ամի Վլուամշապհոյ» և կը զնէ «ի Ձ ամի Վլուամշապհոյ», այն է Քրիստոսի 414 տարին: Սակայն այդ մէկ թուանշանը փոխելով չի վերջանար ինդիրը, բանի որ Կորեան զրեին վերջը միւս թուականները կան, որոնք զրուած վերիվայր կ'ըլլան այդ մէկ փորութեամբ:

Մեր զրերու զիւտի շրջանին, — ըլլայ այն 404 կամ 407 տարին, — Եղեսիոյ

1. *lupphus*, ♂ 48; - 2. *lunq*, ♂ 18; - 3. *lupphus*,
ungh, ♂ 519;

Եպիսկոպոսական աթոռին վրայ կը բազմէր Բաքիդաս կամ Պակիդաս (Paquida)¹: Թէեւ ընդհանրապէս իրեն տասը տարուան եպիսկոպոսութիւն մը կու տան (398-408), սակայն կը տեսնենք որ 410ին սկիզբը գումարուած Սելեւկիոյ ժողովին Հարց ուղղուած թուղթի մը տակ, կը գտնուի նաեւ իր անունը, Միջագետքի և Ասորիքի միւս եպիսկոպոսներուն անուններուն հետ², որոնք էին՝ Անտիոքի Պորփիրը պատրիարքը, Ամիզի և Բերիոյ երկու համանուն Ակակիոս եպիսկոպոսները, եւն.: Այս զուգակցութիւնը՝ միեւնոյն սիւնհոգոսական թուղթին տակ՝ Եղեսիոյ և Ամիզի եպիսկոպոսներուն, երկուքն ալ կորիւնէն յիշուած միաժամանակ, աւելի եւս կը հաստատեն մեր կարծիքը, թէ Եղեսիոյ եպիսկոպոսը՝ հայ գրերու գիւտին ժամանակ՝ ուրիշ մէկը չէր կընար ըլլալ, բայց յիշեալ Բաքիդար, — ասորի քիչ մը խորթ և անսովոր անուն մը, — զոր լսած էր կորիւն՝ Մաշթոցի ուղեկից իր երէց ընկերներէն, և կամ անձամբ տեսած և ճանչցած էր զայն, ինքն ալ հաւանօրէն ըլլալով մին այն մանուկներէն՝ որոնք Ասորիք տարուեցան իրենց վարդապետէն՝ հոն ասորի և յունական դպրութիւններն ուսանելու։ Սոյն վերջին ենթազրութեանս ո՛ւ է հակառակ փաստ մը չունինք. Ընդհակառակն, կորեան այն մտերմական սերտ կապը Մաշթոցի հետ, զոր « հայր իւր » կը կոչէ, և ինքինքը « ականատես և առնթերակաց (նորա) հոգեւորական գործոց »³ կը նշանակէ, և ստուգիւ իրը ականատես մը կը պատմէ մանրամասնօրէն Մաշթոց վարդապետին ուղեւորութեան և հայ գրերու գիւտին բոլոր պարագաները, — և մանաւանդ իրեն ընկերակցաց այն լիուլի վաստահութիւնը, որով իրեն կը յանձնեն զրել՝ իրը աւելի տեղեակ՝ իրենց մեծ վարդապետին վարքը և գործիքը, — զօրաւոր փաստեր են՝ ըստ իս՝ թէ ինքն ալ Մաշթոց վարդապետին ընկերացած ըլլայ գէպ ի Միջագետք և Ասորիք։ Հետեւաբար չէր կրնար անգիտանալ Եղեսիոյ այն ժաշէր կրնար անգիտանալ Եղեսիոյ այն ժամանակի եպիսկոպոսին ստոյգ անունը՝

1. G

— 2. L
se. էջ
Կորիւն.
83. Վ.

ams. S
abourt
93. Pa
Վարդ
անօթուկ

Բարիդաս, և այնպէս ալ նշանակած լւալու էր իր պատմութեան մէջ: Առկայն յետոյ, օրինակողներուն անծանօթ և խորը երեւնալով այդ անունը, և գուցէ հնման զրելով թէ խանգարուած ըլլայ, անո՞ց զրչին տակ փոխուելով՝ դուրս եկեր է բարիդաս, - շատ ծանօթ անուն մը եկեցական գրեանց մէջ, նախ՝ Անտիոքիայի հայրապետը, և երկրորդ՝ Բարիդաս ձերը կամ դպիրը իր ուժառն և չորս աշակերտ ներով, - որով Խորենացւոյն Պատմութեան մէջ ալ եղեր է բարիդաս: Այս մասին Գ. Ջնարքեան՝ որ Բարուդաս կ'ուզէ կարդալ Բարիդասը՝ ուրիշ ենթաղրութիւն մը կ'Ենէ այսինքն թէ՝ Կորիւն «իր գրութեան ժամանակին ամենէն մօտ և երկար ատեն Եղեսիոյ եպիսկոպոսութիւն ըլլած այս բարձր և նշանաւոր եկեղեցականը՝ համար ըեր է եպիսկոպոս եղած ըլլալ 404ին¹: Սակայն այս բացարութիւնը այնքան գոհացուցիչ չ'երեւիր, երբ նկատենք որ՝ նոյնիսկ ընդունելով թէ Կորիւն գացած չըլլայ Ասորիք Մաշթոց Վարդապետին հետ կարելի չէ որ ան հարցուցած ու ու դեկացած չըլլայ իր երէց Ընկերներից ինչպէս են Յովական «յԵկեղեց գաւառէն» և Յովսէփ «ի Պաղանական տանէն», որոնք շատ մօտէն տեսած ու ճանչցած էին Եղեսիոյ եպիսկոպոսը: Մանաւանդ որ նորէն սոյն Յովսէփին է՝ որ տարիներ վերջին երկրորդ անգամ Եղեսիա գնաց Եղինիի հետ՝ ասորի Ա. Հարց գրութիւնները պրկելու րէն թարգմանելու և Հայաստան Դրիկելու կրնար միթէ իր նախկին ճանչցած հայոց կոպոսը (404-407ին) շփոթել այն ժամանակի (428-430ին) եպիսկոպոսին հայութ որ նոյնիսկ Բարուլասն էր, և կորիւն իր տարակոյսը լուծած ու սառուցած ըլլար անորմէ: Ինձի քիչ մը դժուարին կ'երեւայ, որով կը նախընտրեմ ես առաջին ենթաղրութիւնը, թէ Կորիւն՝ իրը ականա

սես կամ ականջալուր՝ անպատճառ Բա-
րիդաս զբած էր, ինչ որ էր իրապէս, և
յետոյ գըշազիրներուն մէջ փոխուած... ու
եղած է Բարիդաս:

6

«Վասն որոյ հաւանեցուցեալ Ֆշմարտին
զաքունիսն, անբնկայ թողոյք»

կորեան զլրին մէջ՝ մթին և կասկա-
ծելի տողերէն մին է սա, որ կը գտնուի
Մաշնոց վարդապետին Բիւզանդիոնէ մհկ-
նելու նկարագրին մէջ։ Նոյն իսկ Պ. Ֆըն-
ուբընեան, որ թէ իր կորեան «Վարք
Մաշնոցի» տպագրութեան մէջ և թէ իր
«Կորին և Ագաթանգեղոս» հմտալից յօ-
դուածներու շարքին «Անահիտ» թերթին
մէջ, դուրս կը ցայտեցնէ կորեան լեզուա-
կան և իմաստներուն առաւելութիւնները,
և անոր զրութեան ինչ ինչ խնդրական
և կնճռոտ կէտերը կը լուծէ հեղինակօրէն,
հոս՝ այս տողին առջեւ՝ կը թուի տաստամ-
սիլ, իբր անկարող մեկնելու պատշաճօրէն
այդ «անընկալ թողոյլ» բացատրութիւնը,
որ այնպէս կարծել կու տայ, թէ Մաշնոց
«չէր ընդուներ մեծամեծ պարզեւները՝
որոնցմով պատուեր էին զինքը արքունիքը
և երեւելի իշխանները»։ և յիշեալ բա-
նասէրը՝ զրեթէ ապշած և գայթակղած՝
հետեւեալ խիստ և կծու դիտողութիւնը
կ'ընէ, «Ասի հազիւ թէ հաւատալի մինի,

համաձայն եմ Պ. Գինը լեռնանին։ Սակայն հարկ է ըսել, թէ միայն «անընկալ թողոյր» բառերը չեն՝ որ լուսաբանուելու պէտք ունին, այլ նաեւ նախորդ պարբերութիւնը, «վասն որոյ հաւանեցուցեալ ճշմարտին զարցունիսն»։ Ի՞նչ բան էր՝ զոր ուզած էր Մաշթոց հաւանեցնել՝ բացատրել՝ հասկցնել արքունիքին, և ի՞նչ աղերս կամ առջնութիւն ունին այդ խօսքերը՝ նախորդ «մեծամեծ պարզեւոք պատուեալ» և յաջորդ «երկիր պագեալ ծիրանափառ Օգոստականացն» պարբերութեանց հետ։ Խնդիր է՝ թէ այդ ամբողջ տողը որ զրեթէ միջանկեալ խմաստ մ'է, և անկազ նախորդ և յաջորդ տողերուն հետ - ունի՞ր գոյութիւն կորեան հարազատ և նախնական գրութեան մէջ, զոր անշուշտ կարդացած ըլլալու էր՝ շատ աւելի կանուխ քան Փարացեցին՝ Ագաթանցեղոսի պատմութեան խմբազրողը, - ոսկեղոսի պատմութեան խմբազրողը, - ան արդեօք այդ տողը, և ի՞նչ վիճակի մէջ, որուն հետքն անզամ չ'երեւիր իր բանաբազութեան մէջ։ Եւ յիշաւի կորեան այդ ամբողջ հատուածը գրեթէ բառ առ բառ առնուած և ազուցուած է Ագաթանցեղոսի պատմութեան մէջ։ սակայն յիշեալ տողը կամ անոր նման բան մը չի գտնուիր հոն։ Դնենք հոս դէմ առ դէմ ի հոկու հատուածները։

սօն

28)

ԱԳԱԹԱՆՃԵԳՈՍ
(Էջ 654-5)

«Եւ մեծամեծ պատա-
րազօք և երիւելի պար-
զիւօք պատուեալ սի-
րով։ Ապա հրաժարեալ
ի ծիրանափառ Օգոս-
տակաթացն ի ի սըրոյ
կաթողիկոսէն, ըմկա-
լիալ ողջոյն յեկեղեց-

1. Կորին. Վարք Ամշոցի (Հրատ. Պ. Յանձնելուն)
Ճանոթ. 547-8 առզին. էջ 87.

դեցւոյթ և յերեւելի իշխանացք քաղաքիմ, և ամենայն իրայովը յաջողեալք ելամէիմ յոսկիապատկառ արքունատուրու»։ եւմ։

Այս երկու հատուածներուն համեմատութիւնը ցոյց կու տայ,

1) Թէ ո՞չ ափ աւելի ճռում և ճապաղ է Ագաթանգեղոսի խմբագրին ոճը քան նոյն իսկ կորեան՝ ուսկից քաղեր է, որով եթէ երբեք կարգացած ըլլար ան՝ Մաշթոցի պատմութեան մէջ՝ վերոյիշեալ ընդգծուած տողը, ո՞ գիտէ քանի տասնեակ բառերով պիտի բացատրէր նոյն կամ նման իմաստը։

2) Կորեան յիշեալ հատուածին մէջ, արամարանօրէն և քերականօրէն այնպէս իրարու կապուած են և զիրար կ'ամբողջացնեն «մեծամեծ պարզեւօք պատուեալ» և անկէ վերջը զրուած «երկիր պագեալ ծիրանափառ Օգոստականացն» պարբերութիւնները, որ ո՞չ միայն բնաւ պէտքը չի զգացուիր «վասն որոյ հաւանեցուցեալ ճշմարտին զարքունիսն անընկալ թողոյր» բառերուն, որոնց իմաստը մուլթ է և անյարմար կերպով զրուած են հոն։

3) Կորեան «երկիր պագեալ» բառը, յետ յիշելու արքունիքն «մեծամեծ պարզեւու»ները, ո՞չ լոկ հրամեցտի և յարգեւու ողջոյն մը կ'արտայայտէ, զոր յագանքի ողջոյն մէջ կը յիշէ արդէն, այլ անկէ աւելի բան մը՝ գոհութեան և շնորհակաւութեան ցոյց մը՝ ընդունած պարզեւներուն փոխարէն, և այսու բոլորովին կը հակասէ «անընկալ թողոյր» խօսքին։ մինչ Ագաթանգեղոսին խմբագիրը՝ ատոր փոխարէն՝ կը գոհանայ միայն «հրամարեալ» բառը գնելով, հակառակ որ Տրդատ և Լուսաւորիչը ընդունած էին կոստանդիիանոսէն ոսկի, արծաթ, պատուական կարստիս և ոսկի սպասս»։

4) Մարդ առաջին անգամ իսկ կարգւուն կորեան վերոյիշեալ հատուածը, կը զգայ անմիջապէս թէ ընդգծուած տողը՝ ինչպէս հոն անկապ, անկից, անյարիր ինչպէս հոն անկապ, անկից, անյարիր

է, ցցուած իրը խութ մը պատմչին վա- յելուչ և զեղասահ բառերուն հսուանին առջեւ, խանգարելով անոր ներդաշնակ վազբը, առանց նոր իմաստ մը կամ փայլ մ'աւելցնելու։ Եւ յետոյ, ինչ ցուլու անհամ բացատրութիւն, «անընկալ թու- պով մը, որ եթէ նոյն իսկ Մաշթոց իրապէս զոյր», որ եթէ նոյն իսկ Մաշթոց իրապէս մերժած ըլլար բիւզանդական արքունիքին պարզեւները, կորեան պէս նուրբ և ճար- պարզեւները, պարզեւները, կը հասկցուի իմաս- տը ամբողջապէս՝ առանց բան մը պակ- սելու, և պատշաճօրէն կը կապուին իրա- րու նախորդ և յաջորդ տողերը։ Ինձի անհաւանական չ'երեւիր, որ այդ «անըն- կալ» բառը, և եթէ չենք ուզեր զայն դուրս թարմատար, և սիալ բնութեալ իրա- պէս ընթերցում մ'ըլլայ ուրիշ բառի մը, որ աւելի յարմար և պատշաճ կերպով բա- ցարէր կորեան միտքը, օրինակ իմն, թէ հոյս հեղինակը դրած ըլլայ «շնորհ կա- ւեալ», «շնորհակալ լեալ» և կամ պար- զապէս «ընկալեալ» բառերը, որոնք յետոյ ձեռագիրներուն մէջ փոխուած ու «ան- ընկալ» եղած ըլլան Սոյն ենթագրութիւնը թէ Մաշթոցին վարմունքը իրեն յարմար ու պատշաճ ձեւին մէջ կը դրուի, և թէ կորեան զրածը աւելի վայելուչ և հասկը- նալի կը դառնայ. «վասն որոյ հաւանեցուցեալ ճշմարտին զարբունիսն, շնորհ կաշեալ շնորհակալ լեալ և կամ լոկ լե- կաշեալ (զինդրուածն)՝ թողոյր և երկիր պարզեալ», եւն։ Այսպիսի խանգարում մը կամ փոփոխութիւն մը բառերու զար- մանակի պիտի չերեւի անոնց, որոնք ա- սիթ ունեցած են պարապելու ձեռագիր- ներու համեմատութեամբ։ Թողով ուրիշ անթիւ օրինակներ, ևս հոս մէջ կը բերեմ յայտնի ապացոյց մը նոյն իսկ կորեան պատմութենէն, ուսկից հատուածիկ մը հանուած ու զրուած է «Սոփերը Հայկա- կանց»ի շարքին Զ պրակին մէջ, որ կը բովանդակէ «Պատմութիւն Սրբոյն Ներսիսի հա- տուածին մէջ՝ ո՞չ միայն ինչ ինչ բառեր տուածին անոնց տեղ ուրիշներ զրուած կրծատուած և անոնց տեղ ուրիշներ զրուած կը համարուի Մեսրոպ երեց, Ժ զարուն, որ երկու անգամ կը յիշէ ներսէս Պարթեւին աշակերտը Մաշթոց՝ հետեւեալ այդպիսի մեղաղբանքի ստուերն անգամ անդողի, վասն անգամ նշամարել այնպիսի մեծողի, վասն անգամ նշամարել անձիքի մը վրայ որպիսի էլ անգամ նույն անձիքի մը վրայ առաջարկէլ իսկ անգամ տողը կարպատ հատեւեալ կերպով։ Եւ ուստի պիտի առաջարկէլ իսկ անգամ տողը կարպատ հատեւեալ կերպով։

1. Ագաթանգեղոս. էջ 655.

որոյ հաւանեցուցեալ ճշմարտին զարբու- նիսն թողոյր, և երկիր պագեալ ծիրանա- փառ Օգոստականացն», եւն։ Հոս դուրս թողով «անընկալ» բառը, և որ կամ աւելորդ է, կամ սխալ ընթերցում ուրիշ բառի մը, և նոյնպէս կը հասկցուի իմաս- տը ամբողջապէս՝ առանց բան մը պակ- սելու, և պատշաճօրէն կը կապուին իրա- րու նախորդ և յաջորդ տողերը։ Ինձի անհաւանական չ'երեւիր, որ այդ «անըն- կալ» բառը, և եթէ չենք ուզեր զէմ առ զէմ։

ՍՈՓ. ՀԱՅԿ.

(Պատմ. Ա. Ներսիսի. էջ 83)

«Ամենայն կրթու- թեամբ նոգեւոր իրաց զամնմատուեալ.. նւրա- զում անգամ զնեշտա- կամ համզիստ զիշե- րոյն և զնարկ քնոյ. յունացաւոր տքմութեամբ ի թօթափել ակամ վճա- րէր, և զայս ամենայն տամա- տիք ոչ սակաւ ժամա- մակալ այլ յունվս»։

Ագաթանգեղոսի խմբագրին ալ առեր է սոյն կտորը կորինէն, Մաշթոցի համար ըսուածը յարմարցնելով Ա. Արիստակեսի (էջ 639-640). «Ամենայն կրթութեամբ՝ կորինական իրաց հոգեւորաց զանձն տու- ամենայն իրաց հոգեւորաց զիշետական եալ... և բազում անգամ զնեշտական ամփիստն զիշերաց զնարկ քնոյ. յունա- հանգիստ զիշերաց զնարկ քնոյ. յունա- շնորհական ի թարթափ ակամ վճա- րէր, ոչ սակաւ ժամա- մակալ այլ յունվս»։

Հոս Ագաթանգեղոսի շատ քիչ կը տար- բերի կորինէն, հազիւ բանի մը բառ փոփոխելով՝ պարտկելու համար իր բա- ցարէր կորինական միջնորդին. մինչ անդին Սոփերը հա- տուած ու զրուած է «Սոփերը Հայկա- կանց»ի շարքին Զ պրակին մէջ, որ կը բովանդակէ «Պատմութիւն Սրբոյն Ներսիսի հա- տուածին մէջ՝ ո՞չ միայն ինչ ինչ բառեր տուածին անոնց տեղ ուրիշներ զրուած կրծատուած և անոնց տեղ ուրիշներ զրուած կը համարուի Մեսրոպ երեց, Ժ զարուն, որ երկու անգամ կը յիշէ ներսէս Պարթեւին աշակերտը Մաշթոց՝ հետեւեալ այդպիսի մեղաղբանքի ստուերն անգամ անդողի, վասն անգամ նշամարել այնպիսի մեծողի, վասն անգամ նշամարել անձիքի մը վրայ որպիսի էլ անգամ նույն անձիքի մը վրայ առաջարկէլ իսկ անգամ տողը կարպատ հատեւեալ կերպով։

Հայոց համար աշակերտական»ին վրայ աւել- ացուած, և «հնեշտական»ին վերջին ան վանկը «հանգիստ»ին միացուցած, ինչպէս կը կորինական աշակերտը Մաշթոց՝ հետեւեալ կերպով. «ընդ նմա և աշակերտան իւր Մես- րոպ, որ անուանեցաւ Մաշթոց (էջ 83). մով, Ուստի պիտի առաջարկէլ է «անհեշտական»ի կորացնական գիշերային» եղած, զուրիշ, ուրիշ պատմուածուած մ'ալ «Եւ ունկն գնէր անդին մը պատմուած մ'ալ. Եւ ունկն գնէր անդին մը պատմուած մ'ալ. Եւ անուանեցաւ գիշերային» անիմաստ և Մեսրոպը աշակերտական» անիմաստ և

այլանդակ տողը: Այսպիսի աղմատումներ տեղի ունեցած են զժրախտաբար մեր մատենագիրներուն զբութեանց օրինակութեան մէջ, որոնցմէ մին է նաեւ, ըստ իս, մեր ինդրոյ նիւթ եղող տողին «անընկալ» բառ:

Այս բոլոր ըսածներէս կ'եզրակացնեմ հետեւեալը: Քանի որ Ազաթանգեղոսի խմբագրող՝ զբեթէ բառ առ բառ օրինակեր ու բանաբաղեր է կորինէն՝ այդ ինդրական տողին բոլոր նախորդ ու հետեւորդ հատուածները, ինչու միայն յիշեալ տողը թողոցեր ու զանց ըրեր է, առանց ու և ակնարկ մ'ընելու կամ նման իմաստ մը դնելու՝ աւելի կամ նուազ փոփոխելով բառերը կամ շարադրութիւնը, ինչպէս սովոր է ընել միշտ: Այս կէտը ենթադրել կու տայ ընականաբար, թէ այդ քիչ մը մութ և կասկածելի տողը հաւանօրէն գո-

յութիւն չունէր կորեան նախկին և հարազատ զբութեան մէջ, և կամ, եթէ կար ինքն ալ մեզի պէս անոր բուն միտքը ըմբռած չէ, որով անյարմար դատած և զանց ըրած է: Այս պարագային՝ ես ինձի թոյլ պիտի տայի կարգալ ու հասկնալ այդ տողը հետեւեալ կերպով. «Վասն որոյ հաւանեցեալ ճշմարտին (Ճշմարտին) զարբունիւն, շնորհ կալեալ (փոխանակ անընկալ բառին) թողոյր, և երկիր պահանական Օգոստականացն», եւն. գեալ ծիրանափառ Օգոստականացն, եւն. այն է, «Ուստի, հաւանեցնելով (համուշելով) արքունիքը և ձեռք բերելով իր ճշմարտին խնդիրը, շնորհակալութեամբ կը թողուր ու երկրպագելով ծիրանափառ Օգոստականներուն», եւն. Ահա՛ իմ համեստ կարծիքս, մինչեւ որ լաւագոյն միկութիւն մը տրուի բանասէրներէն:


Հ. Յ. Թորոսնան

ՏԱՐԱԾԱԳԱՎՈՐԸ

Ս. ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՑ¹

Ան փոքրիկ հօտին տրտմեալ.
Վասկաս արտասուաց բխեալ:
Ան սակաւ զընդին,
Ողորմ աւաղիկ աղէտ.
Զաչս ի վեր համբարձեալ յերկինս:

Ում յանձն արարեր ըզմեզ.
Տարակոյս բաժին է մեր:
Ցիշեա յիշեա մի մոռանար.
Սէր խոստացար անսուտ բանիւ.
Ընդ մեզ լինել զաւուրս կենաց
Մինչ ի կատարած երկրի:



ՏԱՐԱԾԱԳԱՎՈՐԸ

ՅԱՆԴԻՐԻԱԾԵ²

Այսօր պանծալի երգով գոչեմք և մեք
ի ձայն քաղցրութեան նըւագ.
Նախնացըն մեծաց առաքելոց զընդին՝
Նըմանող լիցուք յորդորական ըղձիւ:
Դասուց երկնայնոց հանդիսակից գոլով
Վարուք մաքրութեամբ հանդիպեսցուք տօնիս:
Ռոպէց կազմիչ չոգին Աստուած այսօր
ի ձայն սաստկութեան հողմոյ հնչեաց յաշ-
խարիս:

Ի հրաձեւ տեսակ անուշահուտ բուրմամբ
Լիցան արարածք և սրբեցան վարուք.
Աչիւ տագնապեալ այլալեզու հրէցին
Ճեպով ընթացեալ ի վերնատունն սուրբ:
Պարսկալ դողային յօտարածայն լեզուացն

Անտեղեակը եղեալ զմարգարէին առածն:
ի չոգւոյն շարժեալ վէմն հաւատոյ այսօր
Տարածեաց զուուկանն աստուածային բանին,
Երրակի անձանց երիս հազարն որսաց:
Երկիրս նոր երկին զարդարեցաւ այսօր
Ալ մեզ զալստեամբ ամենիմաստ չուոյն
Աստուածպետական նոր նորոգեաց զեղեալքս:
Շաբունն ի բարձանց մինն ի յերից չոգին,
Բարունն ի բարձանց մինն ի յերից չոգին,
Յայտնեաց ըզմորիուրդս չօր և Որդոյ՝ մարդ-
կան.

Մաքրեաց զարարածս ի դիւամոլ զոհիցն:
Գոչմամբ ձայնակից ընտրեալ հօտին այսօր
Լիցուք իմբակից եկեղեցւոյ մանկունք.
Զիասու վերերգել Երրորդութեանն միշտ:

Հ. Յ. Յ. Յ. Փ.

ՏԱՐԱԾԱԳԱՎՈՐԸ

Ս. ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՒՅ

Աւետիս միշտ աւետեաց արագ հնչումն.

Զի Տէրըն մեր յարեաւ.

Աւետիս հրաշամայնեաց հրեշտակն.

Տէր մեր յարեաւ:

Այսօր Տէր յարեաւ.

Կանայք զի՞ւ լայք զկենդանին

Աւետեաց պատգամս առնեմ.

Զի՞ւ արտասուտ հեղոյք:

Ետապ շոյտ ընթացեալ փութով

Այսօր անդը արշաւմամբ

Ո՞ւր է իմ ծընեալ որդեակն.

Այն հրաշամալպեկն:

Մի՞ն գու պարտիզպան բարձեր

Զայն լուսոյ մարմինն.

Ասա, ո՞ւր եղիր զնա,

Զի ես երթեալ առից:

Ես երթեալ առից.

Տարեալ թագուցից.

Յայն ի հրէական մոլախումբ ժողովոյն:

Քեզ քաղցրաձայնեալ ծանօթ

Առեալ Մարիամ,

ԸգՏէր բարունեան որդեակդ.

Յոյժ կողկողանօք:

Ես եմ նոյն ջիսուս

Նընեալն ի քէն կուսութեամբ

Եկեալ ի կոյս զերեզմանէն:

Այս տաղը, սում 1241 թ ճեռագիր տաղարականին՝
Շնորհաւոյն է, ինչպէս կը վկայէ «Յիշառակարամ»
գրէն » ճիշտ տաղեն վերջ դրուած այսպէս. — Քիրի-
տոս Աստուած բար սուրբ չարչարանօրդ և սուրբ յարու-
թեամբ ողորմեա երգովի սոցա՝ տեանն Ներսիսին. և
եղեկի զծողիս Յուհանիսի. — Եւ իրօր, ո՞ւ է կաս-
կած չի միար եթէ զայն բաղդատենը նոյն Ա. Հեղինա-
կին «Նոր ձայն աւետեաց » յարութեան տաղին ճեմ,
(տես «Բանք չափաւ», տպ. 1830, էջ 391-2). կատա-
րեալապէս նոյն էն իմաստանին և ձեւերը. և զիտինը ո՞ւ
Շնորհաւին այսպիսի կրկնութիւններ շատ բարձ է.
Հմամատ չի միան նոյն կրկնութիւններ շատ բարձ է.
Հայուսու Որդին և Աւետ ուրբաթու երգերը ո՞ւն-
իսուրովային և թաղցը » առանց Շնորհաւոյն անուանն
Այդ օրինակին համեմատ աւելցուցինը նախավերջը լինիւ:

1. Այս փոքրիկ և սիրուն տաղը շարքն է անոնց որոնց հրատարակուած են Ա. Գր. Նարեկացւոյ «Մատենա-
գրութիւնն» էլ մէջ (տպ. 1840), ինչպէս որ սերին 1241, 1348 և այլ զըքագիր տաղարանները, չեմ զիտեր ինչու
շուրջ թողուած է իր շարքն: Զօպանեան զայն հրատարակած է «Հայ էջեր»ուն մէջ (էջ 50) մեր Մանդինի 1501
թուր թողուած է իր շարքն: Զօպանեան զայն հրատարակած է «Հայ էջեր»ուն մէջ (էջ 50) մեր Մանդինի 1501
թուր թողուած է իր շարքն: Զօպանեան զայն հրատարակած է «Հայ էջեր»ուն մէջ (էջ 50) մեր Մանդինի 1501
թուր թողուած է իր շարքն:

2. Տաղը՝ որուն սկզբանական պատճեալ անուանն
անուան մը – զըքուած 1348 թն: